

## ՀԱՅՆՐԻՒՆ ՀՅՈՒԲՇՄԱՆ

(Մեմուհ տետու և մնայուն վաստակ)

Այս տարի լրանում է գերմանացի հայագետ Հայնրիխ Հյուբշմանի ծննդյան 160 և մահվան 100-ամյակը:

Հ. Հյուբշմանը հայ լեզվաբանության ամենավիրական դեմքերից է: Գերմանիայի էրֆուրտում ծնված, տեղի վարժարանը և գիմնազիան ավարտած, այնուհետև Ենայի, Տյուբինգենի, Լայպցիգի, Մյունխենի համալսարաններում բանասիրություն ուսանած, մասնավորաբար իրանագիտության ու հայերենագիտության մեջ մասնագիտացած գիտնականը 1877 թ. հաստատվում է Ստրասբուրգում: Այստեղ պրոֆեսոր Հյուբշմանը տարիներ շարունակ դասախոսական և գիտահետազոտական աշխատանք է կատարում հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում՝ հիմնվելով հնդիրանական, գերմանական և սեմական լեզուների, այլև հունարենի, լատիներենի և հայերենի տվյալների վրա:

Հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության բնագավառում նա արեց այն, ինչ չէին մտածել իրենից առաջ իր նախորդները (Ֆ. Վինդիշման, Գ. Պետերման, Պ. դը Լագարդ, Ֆր. Մյուլլեր և ուրիշներ), իրենից հետո ի վիճակի եղան անելու այն, որի ուղին գրեթե ամբողջությամբ զծել էր նա:

Ենայի համալսարանում Հյուբշմանը հայերենին ծանոթացավ պրոֆ. Մերքսից, երբ ընդամենը քսան տարեկան էր, իսկ հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն սովորեց անվանի Ավ. Շլայխերից: Նա եղավ Ֆր. Մյուլլերի աշակերտը, որն իր նախորդների հետևությամբ հայերենը դիտում էր ոչ առանձին, այլ իրանական ճյուղի լեզու, իսկ ինքն ապացուցեց, որ այն առանձին և ինքնուրույն ճյուղ է հնդեվրոպական լեզուների մեջ:

Նա եղավ Հ. Աճառյանի ուսուցիչը, որն իր ողջ գործունեության ընթացքում մնաց հարազատ իր ուսուցչի գիտական հավատամքին և հայոց լեզվի համեմատական ուսումնասիրությանը նվիրած իր աշխատանքներում անվերապահորեն դավանեց այդ անխորտակ տեսությանը: Ավելին, Աճառյանը եվրոպական հայերենագիտությունը տեղափոխեց Հայաստան և իր օրինակով ու իր

աշակերտներից հատկապես Ար. Ղարիբյանի, Էդ. Աղայանի և Գ. Ջահուկյանի միջոցով մեծ ձեռքբերումներ ունեցավ հայերենի ոչ միայն արտաքին համեմատությունների, այլև ներքին վերլուծությունների բնագավառում:

Շուրջ քառասուն տարվա անխոնջ և հետևողական աշխատանքի արդյունքը եղան Գյուլբշմանի երեք տասնյակից ավելի այն ուսումնասիրությունները, որոնցում հայերենը քննության էր առնվում իր ժամանակի հնդեվրոպաբանության մակարդակին համապատասխան, և որոնք լայն արձագանք են գտնում ոչ միայն իր ժամանակին, այլև շարունակաբար հիմնավորվում և կատարելագործվում են հետագայում, ընդհուպ մինչև մեր օրերը:

1970—ական թթ. սկսած հայերենի համեմատական ուսումնասիրությունը թևակոխում է նոր փուլ, և նորագույն ուսումնասիրություններում, հատկապես կատարված եվրոպացի և նախկին խորհրդային լեզվաբանների, մասնավորապես հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրությամբ զբաղված մասնագետների կողմից, Գ. Գյուլբշմանի ուսումնասիրության մեթոդիկան մնում է իր ամուր հիմքերի վրա, ուստի հնարավորություն է ստեղծում հետագա ավելի լայն աշխատանքների ձեռնամուխ լինելու համար:



Գայերենին այսօր տրվում է համեմատաբար կարևոր, եթե ոչ որոշ դեպքերում առաջնային տեղ հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության մեջ:

Գայ իրականությունը գիտեր Գ. Գյուլբշմանին և անցյալում, և հետագայում, մանավանդ վերջին տասնամյակներում:

Նրա մասին հողվածներ են գրվել «Բազմավեպ», «Գնդես ամսօրյա» և մյուս պարբերականների, ինչպես նաև մեզանում լույս տեսնող ամսագրերի

էջերում: Նրա հայերենագիտական աշխատությունները, բացառությամբ մի, քանիսի, թարգմանվել և լույս են տեսել հայերեն, ընդ որում ոչ միայն «Չանդես ամսօրյայի» (1893, 1894, 1896, 1901, 1904–1907 թթ.) և «Բազմավեպի» (1901–1902 թթ.) էջերում, այլև առանձին գրքերով՝ լույս տեսած Վիեննայի Սխիթարյանների «Ազգային մատենադարան» (հ. ԺԵ, հ. 53) շարքի մեջ:

Շուրջ երեք տասնամյակ առաջ լույս տեսավ Բ. Դյուբշմանի «Հայերենի տեղը հնդեվրոպական լեզուների մեջ» հիմնարար աշխատությունը (Ե., 1985), իսկ բոլորովին վերջերս համբավավոր Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության հովանավորությամբ լույս ընծայվեցին ի թիվս հիշյալի նաև մյուս հայերենագիտական աշխատությունները երկու գրքով, առաջինում ներկայացված է «Հայերենի քերականություն» ծավալուն աշխատությունը (Ե., 2003), իսկ երկրորդում՝ երկու տասնյակից ավելի հոդվածներն ու գրախոսությունները՝ «Հայագիտական ուսումնասիրություններ» (Ե., 2004) վերնագրով:

Բ. Դյուբշմանի գիտական ժառանգությունը մեծապես նպաստել է հայերենի պատմահամեմատական և տիպաբանական ուսումնասիրության գործին, և հետագայում ևս այն խաղալու է իր ուրույն դերը:

Մեծանուն լեզվաբանը ժամանակին սահմանել էր մի շարք հնչյունական օրենքներ, որոնք հիմք հանդիսացան ոչ միայն իրանական և հայկական լեզվաճյուղերը միմյանցից սահմանազատելու և առանձին բնութագրելու, այլև հայերենի և նրան առավել մերձավոր լեզուների միջև համեմատություններ անցկացնելու համար:

Այդ օրենքների գործադրմամբ նա ժամանակին ստուգաբանել էր հայերեն շուրջ 2200 բառ կամ բառարմատ (ստույգ՝ 1971 հասարակ և 217 հատուկ անուն)՝ բնականաբար նկատի ունենալով իր նախորդների, հատկապես Լազարոֆի և Գոշեի կատարածն այդ բնագավառում:

Ինչպես գիտենք, մի կողմից Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» և Զահուկյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության տվյալներով, հայերենի բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական ծագման բառերի կամ արմատների թիվն, օրինակ, ավելացել է ավելի քան 700–ով, իսկ մյուս կողմից ճշգրտվել կամ նոր ստուգաբանությամբ պարզություն է մտցվել հայերենի փոխառությունների հարցում: Հետագայում կատարված այդ ստուգաբանությունները լիովին հիմնված են նաև Բյուբշմանի սահմանած հնչյունական օրենքների, արմատի կազմության սկզբունքների վրա:

Բյուբշմանը տվել է նաև հայերենի տարածքային բնութագիրը: Ըստ այդմ ցեղակից լեզուներից հայերենի հետ ավելի սերտ առնչություն ունեն մի կողմից հունական, մյուս կողմից բալթյան և սլավոնական լեզուները: Այս բնորոշումը հետագայում ավելի է հաստատվում, հատկապես Պորցիգի, Ջոլտայի,

Ջահուկյանի և ուրիշների ուսումնասիրություններում: Ավելին, հնդեվրոպական լեզուների համեմատական-տիպաբանական նորագույն հետազոտություններում, որոնցում հայերենին տրվում է անհամեմատ մեծ կարևորություն, հատկապես հնդեվրոպական բաղաձայնական համակարգի վերանայման հետ կապված առաջարկության, հնդեվրոպացիների բուսական ու կենդանական միջավայրի բնութագրման, մանավանդ հնդեվրոպական ցեղերի նախնական բնակության վայրի տեղորոշման հարցերում, Գյուլշմանի և նրա տեսության հետևորդների գիտական ձեռքբերումներն ստանում են առանձնակի կարևորություն:

Հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության բնագավառում ապագայում նույնպես կլինեն նոր աշխատանքներ, որոնք շատ հարցերում անպայմանորեն ու անհրաժեշտաբար առնչվելու են անմահ հայերենագետի գիտական խիզախության արդյունք հանդիսացող գործերին՝ ի նպաստ հայերենագիտության առաջընթացի և ի հիշատակ նրա անմահ անվան: